Զամախի քաղաքը առանձին բերդ ու պտուղ չունի բոլորը շրջակայ գիւղերից, և առաւելապէս Ազսու գիւղից են բերում. որովհետեւ իբրեւ՝ իբր թէ ազնիւ քաղաքացիք արժան չեն համարում այդպէսործուվթեամբ և երկրագործուվթեամբ պարապել։ Զամախու շրջապատումն կան միայն մի քանի այգիներ, որոց մէջ նշանաւոր է արքունի ճանապարհի վրայ պարոն Եաղոր Իւանիչ Քալանթարեանցի այգին։ Զամախու նշանաւոր և յայտնի արհեստն է մետաքսագործուվթիւնը, որոյ համար կան արհեստանոցներ՝ բայց ասիական հին ձեւով. սակայն բաւական լաւ գործուածներ են պատրաստում, գոր օրինակ՝ թաշկինակ, վերմակի երես, պարանոցապահ (շարֆ-վզի) եւայլն։

Զամախու բարոյական բերքերն են՝ 1)Հայոց և Ռուսաց եկեղեցիքն. 2)Հայոց և Ռուսաց տղայոց ուսումնարաններն. 3)Հայոց օրիորդաց դպրոցն. 4)Հայոց Գրադարան-Ընթերցարանն և 5)Հայոց Թատրոնը։ Նշանաւոր են Զամախի քաղաքում Լալայեանց և Գեօքչայեանց տները, որոց տանուտէրք են Մեծ. Յակոբ բէկ Գեօքչայեանց և Աղէքսանդր աղա Լալայեանց. աչքի ընկնող են և հետեւեալ անձինք՝

Ջհանգիր բէկ—Մէլիք Զահնազարեանց
Ջաւատ բէկ Վլասեանց
Ջիւանշիր բէկ - Ջալալեանց
Ջումշուտ բէկ Գեօքչայեանց
Բալասի բէկ Օսմանցեանց
Բալայ բէկ Լալայեանց
Աղաբանբէկ - Գեօքչայեանց
Զանշի բէկ - Վլասեանց
Միրզա բէկ Միրզաբէկեանց
Խաչատուր բէկ Եղիազարեանց
Թադէոս բէկ Եգանեանց
Պ. Քրիստափոր — Նազարեանց
Պ. Յովհաննէս — Խալաֆեանց
Սահակ աղա Գեանջեցեանց
Աբրահամ բէկ - Զահվերդեանց